

Գողթանիկ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Համբարձում Սամվելյան

Հեռախոս՝ +374 .93.843.668

Բնակչություն՝ 200

Այն գտնվում է Վայոց ձորի մարզի Երեզնաձորի տարածաշրջանում՝ Եղեգիսի կիրճում, Եղեգիս գետի ձախ ափին՝ հյուսիսարևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Երեզնաձոր քաղաքից 30կմ է, հանարապետական նշանակության ճանապարհից՝ 29կմ: Համայնքը հյուսիսարևելքից սահմանակից է Կարմրաշեն գյուղական համայնքին, հարավարևելքից սահմանակից է Վարդահովիտ գյուղական համայնքին, իսկ հարավարևմուտքից սահմանակից՝ Հերմոն գյուղական համայնքին:

Գյուղը մինչև 1988թվականը բնակեցված է եղել աղբբեջանցիներով, իսկ 1988թվականից՝ Ղարաբաղյան պատերազմի պատճառով բռնի տեղահանված փախստական հայերով: Գյուղը նախկինում անվանվել է <<Ղարախլու>>, իսկ 90-ական թվականներից հետո գյուղը վերանվանվել է <<Գողթանիկ>>, քանզի բնակչության 80%-ը գաղթվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գողթն գավառից:

Գյուղում կա մի քանի խաչքարեր և կիսաքանդ եկեղեցի: Գյուղը գտնվում է Ծ.Մ. 1850մ. բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը զով: Լինում են չորային և երաշտի տարիներ, տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Մշակում են բանջարաբուստանային և ցանովի մշակաբույսեր: Զբաղվում են անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղն ունի դպրոց և բուժկետ: